

րազմին...: Վերապատուելի իմ, գիտենաս որ ունիմ խնդրուած ի քէն որ լուեալ եմ՝  
թէ ձեր հրամանքնիդ ջահկըցոց խորհրդատետրով կասէք պտրզ. խիստ լաւ կանէք, գէրբէ  
մեր խորհրդատետրը ճաշոց գիրքն է, ամա չենք կարեր ի գործածել, և ոչ գտանի աստ  
զճաշոց գիրքն և ոչ կարեմք տանել եկեղեցին վասն ծանրութեանն: Բայց մեք ունիմք  
խորհրդատետրը որ տէր թայթէոսն է գրեր, և իւր խորհրդայտետրին օրինակն է, և  
ոչ գտանէ զամէնն աւուր պատշաճի, և ես ասեմ պատարագ լաթինացոց եկեղեցին և  
կու պատահի տարակուսի և խղճմտանաց բան: Բայց լուեալ եմ թէ ունիք պասմա  
խորհրդատետրը հայ գրով, լաթին օրինակով, խնդրեմ որ շնորհ անես...:

Թվին Փրկչին 1717

Մայիսի ի:

Ընկալչիք յօհաննէս քահանայէ, պատրաստական  
ծառայ. մնամ աղօթից ձերոց

## 2.

Անկեղծութեան ցոլացում մ'է հետագայ գիրը՝ ստորագրող պատանւոյն կողմէ  
առ իւր նախկին հայրը Մխիթար: Դիտելի է միանգամայն սա կէտը, որ մինչ կա-  
րեկցութիւն կը շարժէ ան, դուրս կը ճառագայթէ միանգամայն Եր. Հօր գեղեցիկ  
սկզբունքները և իր փոքրիկ Միաբանութեան ներքին յարգն ու բարձրութիւնը.  
հոգ չէ որ քաջարթուն ու փորձ Հիմնադիրը այդ վիճակին անյարմար դատելով ստի-  
պուեր է ետ առաքել զպատանին, անոր իսկ բարւոյն համար:

Ամենապատիւ տեառն սրբոյ հօրն իմոյ ապսպահօրն խոնարհական ողջոյնս մատուցանեմ

Եւ յետ ողջունի, իմ սիրելի հայր իմ, եթէ հարցանես զիմ գորպիսութիւնը գոհու-  
թիւն Քրիստոսի ողջ և առ(դ)ջ եկանք հասանք ի քաղաքն Վեննա, տասն և եօթն օրն,  
յետ հասանելուն քիչ մը տկարութիւն եկաւ ինձ. 33 օր ի սպիղալն պառկեցա, գոհու-  
թիւն Քրիստոսի հիմի առողջանալու կողմն դառցա: Դարձեալ, հայր իմ եթէ հարցանես  
զինչ տկարութիւն էր տէյի, երանի էր աւուրն այն որ ձեր մէջն մտայ ուրախութեամբ  
խնդութեամբ: Դարձեալ, հայր իմ, դուս որ հանէցիք զիս մահս ձեռքս տվիք այսպէս  
հանէցիք դուս. ախով վախով վէրէմ էղա հաւեցա հիւլալ դառցա, քէչկէ այդ չափ ալ  
մէջերնիդ մտած չի պիտէի. եթէ այսպէս մնամ, 2 ամիս կամ 3 ամիս չեմ քըչէր կը  
մեռանիմ: Դարձեալ, հայր իմ, կաղաչեմ ձեզ որ աղօթէք զինձ համար, որ Աստուած  
իմ մտացս բառնա Միաբանութիւն եօթսա քանի միտքս է ախախ ընելով կը մեռանիմ:

Դարձեալ, հայր իմ, եթէ հարցանես տէր Պետրոսն, զահիր ինձ ըսպասելու չէ, ելաւ  
գնաց, հիմի մնացի մինակ հիւանդութեամբ ելած, տէրման չունիմ. փչես կըյնիմ. մեռելի  
երես քուն [գոյն] կա իմը չիքա հիմի մինակ ճանապարհ ելա, օգոստոսի 20ին, տքալով  
բէքալով պիտի երթամ կամաց կամաց: Հանապարհ ալ չեմ գիտէր, չի մեռանիմ լաւ է,  
պարէ մէկ մարդ մալ ընկեր չունիմ քովս որ զիս մխիթարէ, անմխիթար եմ մնացէր.  
միայն Այ եմ ապաւիներ. իբրև հայր և մայր ձեզ ճանաչեցի, ձեզմով կը մխիթարէյի.  
դուք ալ ելաք ձեռացս, ախախ ընելով պիտի մեռնիմ, կաղաչեմ ձեզ աղօթէք վասն ինձ  
ամէն:

Դարձեալ իմ սիրելի հայր իմ, եթէ հարցանես պատերազմի կողմն, գոհութիւն քրիս-  
տոսի, օգոստոսի տասն և ինին խապար եկաւ թէ տաճկին ճակատն աւերեցինք, մեծ  
ուրախութիւն եղաւ քաղաքին մէջ: Յոյս ունինք թէ յետ երից աւուրց պելիրդատ ալ  
կառնեն Ամէն...:

Ես տիրացու Գրիգորս ողջոյնս մատուցանեմ և առ ամենեսն միաբանից ձերոց

Ամի Տեառն 1717. օգոստոսի 20 ի Վեննա: